

УДК 556.5

Ա.Թ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Թ.Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԳԵՏԵՐԻ ՋՐԻ ՕՐԱԿԱՆ ՄԻՋԻՆ ՋԵՐՍԱՍՏԻՃԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ, (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Գետերի ջրի օրական ջերմաստիճանների դիտարկումների վրա են հենվում ջերմաստացային ռեժիմի բոլոր հաշվարկները, որոնք ունեն ինչպես գիտական, այնպես էլ կիրառական կատար նշանակություն: Մակայն այդ դիտարկումների (որոնք կատարվում են օրական 2 անգամ՝ ժամը 8-ին և 20-ին [1]) միջին արժեքը, մեր կարծիքով, չի կարող արտահայտել գետի ջրի իրական ջերմաստիճանը: Դա պայմանավորված է դիտարկումների ժամերի ճիշտ բնությունով: Ինչպես նաև հաճախականությամբ: Բնական է, որքան դիտարկումների շարքը երկար լինի, այնքան միջին արժեքի հավաստիությունը մեծ կլինի և ավելի մոտ կլինի նորմային: Մակայն դիտարկումները օրական երկու անգամ են (8 և 20) և բացի այդ ժամերը նույնպես հարմար չեն ընտրված (մասնավորապես, ձմռանը, երբ նշված ժամերին դիտարկումներ կատարելը, այն էլ բարձր լեռնային շրջաններում, դառնում է գրեթե անհնար):

Այս խնդրին որոշակի լուծում տալու համար առաջարկում ենք մի մեթոդ, որի կիրառումն ընկած է մեր կողմից կատարված դաշտային կարճաժամկետ (յուրաքանչյուր գետի համար մինչև 5 օր տևողությամբ) ջրի ջերմաստիճանի դիտարկումները ՀՀ տարբեր գետային ավազաններում (ընդամենը 63 դեպք):

Դիտարկումները կատարվել են տարվա տաք սեզոնին, հետևյալ գետ-դիտակետերում՝ Ախուրյան-Կապա, Գասաղ-Հարրավան, Մանրաշ-Մեծ Մանրաշ, Փամբակ-Վանաձոր, Փամբակ-Թոմանյան, Զոյազետ-Ստեփանավան, Տաշիր-Ստեփանավան, Դեբեդ-Թոմանյան, Դեբեդ-Ալավերդի, Հսխտոմ-Պառավաքար, Տավուշ-Թովուզ, Այստե-Իջևան, Արփա-Կեչուտ, Արփա-Գետափ, Ռոտուն-Ռոտուն, Ողջի-Կապան:

Գետերի ջրի ջերմաստիճանի չափումները կատարվել են ժամը 6-ից մինչև 24-ը ներառյալ՝ ժամը մեկ անգամ հաճախականությամբ, իսկ օրական միջին ջերմաստիճանը որոշվել է դիտարկումների միջին րվաքանական արժեքով:

Ուսումնասիրություններն ու հաշվարկները ցույց տվեցին, որ գետի փաստացի դիտարկված ջրի օրական միջին ջերմաստիճանը ($t_{\text{օր}}$) կախված է ժամը 18-ին (t_{18}) դիտված ջրի ջերմաստիճանից.

$$t_{\text{օր}} = a t_{18},$$

որտեղ a -ն հաստատուն մեծություն է՝ $a = \frac{t_{\text{օր}}}{t_{18}}$, որի միջին արժեքը հավասար է

0,88-ի: Այսպիսով, չափելով գետի ջրի ջերմաստիճանը միայն մեկ անգամ՝ ժամը 18-ին, կարող ենք անցումային գործակցի միջոցով (a) որոշել օրական միջին ջերմաստիճանը:

Ամփոփելով նշենք, որ այս մեթոդը ոչ միայն կրճատում է դիտարկումների քանակն ու ֆինանսական ծախսերը, այլև ավանդական մեթոդի համեմատ բարձրագնում է հուսալիության աստիճանը: Վերջինիս երաշխիքը մեր կողմից ստացված օրական

միջին ջերմաստիճանն է. որը մեկժամյա հստահականությւնը սր չափված ջերմաստիճանային արժեքների միջին բնութագրողականն է:

Ֆիզիկական աշխարհագրության ամբիոն

Ստացվել է 27.06.1997

Գ Ր Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Наставление гидрометеорологическим станциям и постам. 1957, вып. 2, ч. 2. Л.: Гидрометеоиздат.

Ա.Տ. ԳՐԻՕՐՅԱՆ, Կ.Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ОБ ОПРЕДЕЛЕНИИ СРЕДНЕСУТОЧНОЙ ТЕМПЕРАТУРЫ РЕЧНЫХ ВОД ГОРНЫХ СТРАН (НА ПРИМЕРЕ РА)

Р е з ю м е

В сообщении предлагается новый метод для определения среднесуточной температуры речных вод, который основан на полевых наблюдениях. Измеряя температуру речных вод лишь раз в сутки (прежде дважды в сутки - в 8⁰⁰ и 20⁰⁰ часов), посредством переходного коэффициента, можно определить среднесуточную температуру воды.